



Saint Thomas Armenian Church

ՍՈՒՐԲ ԹՈՎՄԱՍ ՀԱՅՑԵԿԵՆՅԻ

REV. ARNAK KASPIAN, PASTOR

Հոկտեմբեր 23, 1973

Գերաշնորհ
Տ. Թորգոմ Արք. Մանուկեան
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Նիւ Եորք, Նիւ Եորք

Սիրելի Սրբազան Հայր,

Ձեր բացակայութեան Տ. Մամբրէ ԲՏ. Գուզուեան առաջարկեց որ Հոկտ. 14ի շաբաթավերջին այցելեմ Հիւսթընի մեր համայնքը եւ թէ օդանաւի տոմսին ծախքը պիտի վճարուի Առաջնորդարանի սնտուկէն: Հակառակ պսակ մը ունենալուս ուզեցի այս առիթը չփախցնել: Ստուգեցի որ յաւելեալ փոքրիկ ծախքով մը պիտի կարենամ այցելել Օքլահոմա Սիթի եւ Մայամի: Եւ քանի որ Առաջնորդարանն էր որ ծախքերս կը հոգար, յաւելեալ այցելութիւններուս տուի պաշտօնական հանգամանք եւ ճամբայ ելայ ազգին ցրուած զաւակները փնտռելու Ձեր ծրագրին եւ հրահանգին համաձայն: Պէտք է ըսել որ Ձեր այդ հոգածութիւնը մեծ տպաւորութիւն գործեց եւ ճամբու ծախքն ալ ապահովեց: Այս առիթի Ձեր մասնաւոր ուշադրութեան կուզեմ յանձնել Օքլահոմա Սիթիէն ձան Իսկեան, որուն հասցէն պիտի գտնէք այս նամակին վերջը:

Ծրագրելով Օքլահոմա քաղաքին տեսարժան վայրերը տեսնել օդակայան մեկնելէ առաջ, առտուրնէ իջայ քաղաք Պր. Մուշեղ Դուրեանի հետ, որ ուսանող մըն է 70 մղոն անդին գտնուող Վէտրիօրտի մէջ: Աչքիս զարկաւ "Օրիէնթըլ Բըկ" ցուցատախտակ մը եւ ուշադրութիւն ըրի որ տակը հայու անուն մը կայ "ձան Իսկեան": Ներս մտայ, ինքզինքս ծանօթացուցի իբրեւ Առաջնորդարանէն դրկուած եւ մերինները փնտռելու պաշտօնով անձ մը: Ծատ սիրով ընդունեց: Գրասենեակի պատին վրայ տեսայ Վեհափառին նկարով Առաջնորդարանի օրացոյցը: Յայտնի եղաւ որ բողոքական է, 1969ին իր Ամերիկացի կինը կորսնցուցած է: Օքլահոմա փոխադրուած է 1930ին եւ ատենը անգամ մը Նիւ Եորք կը հանդիպի, ժառանգորդ չունի եւ Հայց. Եկեղեցւոյ դերին կարեւորութեան մասին առողջ գաղափարներ ունի: Երբ հարցուցի թէ կտակ գրած է: Պատասխանեց "ոչ" եւ իր բառով ըրածը "էհմալութիւն" է: Քաջալերեցի որ գրէ եւ Առաջնորդարանը մասնակից ընէ իր հոգածութեան: Խոստացաւ: Երեւոյթէն դատելով միլիոնատէր մը պէտք է ըլլայ: Մեկնումի պահուն թելադրեցի որ այս ճամբորդութեանս ծախքին պիտի ուզէ ր արդեօք մասնակցիլ: "Հայց. Եկեղեցւոյ մաճէսթին կը ներկայացնէք այս յարկիս տակ" ըսաւ եւ ուրախութեամբ յանձնեց հարիւր տոլարի ջէք մը: Տք. Կարօ Արմուտեանն ալ յիսուն տոլար պիտի դրկէր նոյն նպատակաւ: Այսպէսով ճամբուս ամբողջ ծախքը ելած է արդէն:

Հինգ օրեր մնացի Հիւսթըն, այդ օրերուն ընթացքին ժողովներ ունեցայ Օիական Խորհուրդին հետ, Տիկնանց Միութեան հետ եւ այցելութիւններ տուի հիւանդանոց եւ կարգ մը ազգայիններու բնակարանները: Ձեզի ծանօթ է Տիկ. Նուարդ Սանճաք-եանի ստեղծած դժուարութիւնը: Համոզեցի որ այդ դրամը կորսուած նկատեն եւ հրաժարին դատարան դիմելու նպատակէն: Այս տողերուն մէջ մանրամասնութեանց կարելի չէ մտնել բայց միայն կուզեմ յիշել որ սկսելով Օիական Խորհուրդէն գոյութիւն ունէի անորոշութեան, ջլատութեան եւ անձնականութիւններու շուրջ ստեղծուած պրկուած վիճակ մը: Ուրախ եմ ըսելու որ Կիրակի օրուան յաջող եւ իրենց համար ալ անակնկալ հանգանակութեան արդիւնքը ստեղծեց նոր լաւատեսութիւն եւ համայնքի ոգի: Տան վրայի ամբողջ պարտքը վճարեցին: Յետ այսու նաեւ պիտի հրատարակեն թերթիկ մը:

Թէ Միական Խորհուրդը եւ Թէ Տիկնանց Միութիւնը հետեւեալ երկու խնդրանք-ները կը մատուցանեն.

- ա. Տարուան ընթացքին համար նուազագոյն երեք այցելութեան թուականներ ծրագրել կանուխէն եւ ոչ թէ վերջին պահուն:
- բ. Միշտ նոյն անձը ղրկել որպէսզի տեղեակ եղած ըլլայ իրենց մասնաւոր պարագաներուն եւ ծանօթ անձերուն:

Այս առթիւ թոյլ տուէք որ թելադրութիւն մը ընեմ: Օտար եկեղեցական համայն-ներ միսիօններ կուենան հեռաւոր վայրերու մէջ: Այս միսիօնները խնամքը կը վայելեն մասնաւոր համայնքի մը: Նոյն սկզբունքէն մեկնելով կարելի է արդեօք մեր նորակազմ համայնքներուն հոգածութիւնը յանձնել հաստատուած եկեղեցիի մը խնամքին, տեսակ մը կնքահայրութիւն: Այս անցնող օրերը թէեւ անհիշատակ յոգնեցուցիչ եղան, սակայն ստեղծեցին խանդավառութիւն մը իմ մէջս:

Տեղեկագրիս մէջ տեղ տուած եմ նաեւ Մայամի այցելութեանս: Գլխաւոր պատ-ճառը այն է որ Առաջնորդարանը կիմանայ միայն տրտունջներ եւ երբ երջանիկ կարգադրութիւններ ըրած ըլլաք այդ մասին ոեւէ գնահատական խօսք չէք լսեր: Ուրախալի էր Մայամիի մեր համայնքին ընդհանուր մթնոլորտը: Երբ այցելեցի Պր. Լեւոն Սարգիսեանին, զոր կը ճանչնայի Տիթրոյթէն եւ որ ներկայիս Մայամիի մեծահարուստն է եւ առանց աղմուկի համեստօրէն իր բարոյական եւ նիւթական աջակցութիւնը կը բերէ, ըսի իրեն որ հովիւին եւ համայնքին միջեւ եղած համերաշխ յարաբերութիւնը գլխաւորաբար իրեն կը պարտինք քանի որ առաջին օրէն քաջալերող եւ յարգալից եղած է անոր նկատմամբ եւ ամբողջ ծուխն ալ իր օրինակին կը հետեւի նաեւ այդ գետնին վրայ:

Խոնարհաբար կը ներկայացնեմ Ձերը Սրբազնութեան այս տեղեկագիրը առ ի գիտութիւն:

Մնամ խորին ակնածանօք եւ սիրով

Առնակ ԲՏ. Գասպարեան

Mr. John Y. Iskian
6430 N. Western Avenue
Oklahoma City, Okla. 73116

Քիւ 25890
Օգոստոս 22, 1977

Արգանաշնորհ
Տ. Գերենիկ Բհնյ. Գոնտրալեան
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Հէյվըրհիւ-

Սիրելի Տ. Գերենիկ,

Առաջած ենք ձեր նամակը որով կը ներկայացնէիք ձեր հրատարականք Հէյվըրհիւի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հովուութենէն:

Նկատի առնելով ձեր փախազք փոխադրուելու եւ ուրիշ համայնքի մը մէջ ծառայելու,
ձեզ կը նշանակենք հոգեւոր հովիւ Հիւսթըն Քէքսասի Ս. Գեորգ Հայց. Եկեղեցւոյ
մեր համայնքին:

Հաճեցէք կարգադրութիւն ընել Հէյվըրհիւի մեր ծխական Խորհուրդին հետ որ
ձեր հրատարականք Գառարազը մատուցանէք Սեպտեմբեր 4, Սիրակի օր, եւ համայնքի ան-
դամները հրաւիրէք պատշաճ Մաշ-հաւարոյթի մը:

Ծխական Խորհուրդին հետ արդէն իսկ խորհրդակցութիւն ունեցած ենք նոր հոգե-
ւոր հովիւ մը նշանակելու մասին, եւ յոյս ունինք որ մտիկ ապագային պիտի կա-
րենանք վերջնական կարգադրութիւն մը ընել այդ կապակցութեամբ:

Փնայատելով ձեր ծառայութիւնը Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ համայնքի
կեանքին մէջ, կը մաղթենք որ Աստուծոյ օրհնութիւնը ձեզի հետ լինի ձեր ծառայու-
թեան նոր դաշտին մէջ:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Օրինակ՝ ծխական Խորհուրդի Ատենապետին

Քիւ 25428
Հոկտեմբեր 11, 1977

Արժանաշնորհ
Տ. Գերենիկ ՔԳՆյ. Գոնարալեան
Հովիւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ
Հիւսթըն.

Սիրելի Տէր Գերենիկ,

Սեպտեմբեր 21, 1977 թուակիր ձեր նամակի բովանդակու-
թեան տեղեկացանք Ս. Էջմիածնէն մեր վերադարձին:

Գոհ ենք որ Հիւսթընի Եկեղեցւոյ ծխական Խորհուրդը
վայել ընդունելութիւն քրած է ձեզի եւ ձեր ընտանիքին,
եւ ձեր ժամանումին առթիւ կազմակերպուած ճաշկերոյթը
անցած է յաջող:

Անդրադառնալով ծխական ժողովի հարցին, այժմէն իսկ շը-
ջարեականներ պէտք է դրկուին Եկեղեցւոյ ծխականներուն՝
յայտարարելով որ անոնք որոնք մինչեւ Նոյեմբեր 15 կամ
Դեկտեմբեր 1, 1977, արժանագրուին որպէս անդամ եւ իրենց
տարեկան տուրքը վճարեն իրաւունք պիտի ունենան մասնակ-
ցելու, քուէարկելու եւ ընտրուելու 1978 Մարտին կամ Ապ-
րիլին գումարուելիք ծխական ժողովին: Իսկ Դեկտեմբեր 1էն
ետք արժանագրուող անդամները պիտի ենթարկուին թեմական
Վանոնադրութեան 7րդ Ցօղուածի արամադրութեան:

Համայնքի առաջին ծխական ժողովը պաշտօնական եւ օրի-
նաւոր կ'ըլլայ մասնաւոր արտօնութեամբքը Առաջնորդին:

Որեւէ հարցի կամ դժուարութեան պարագային անմիջապէս
գրեցէք մեզի:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԱՌԳՈՍ
Առաջնորդ

Քիւ 25177
Մարտ 8, 1977

Մեծայարգ
Տիար Յովհաննէս Հեքիմեան
Ատենադեա ժիւղական Խորհուրդի
Հիւսիսըն.

Յարգելի Տիար Հեքիմեան,

Յունիս ամսուան թելեվիզիոնի հայկական յայտագրի գաւրաստուիթեան
համար առանձին ծրարով կը գրկենք կարգ մը գրքոյկներ:

Այս յայտագրի առնչութեամբ թելեվիզիոնի վարիչը փիւմեր ուզած էր
մեզմէ: Ներփակեալ փիւմերու ցանկին մէջ նշուածները կրնանք արա-
մազրել իրեն: Անոնց մէջէն թող ընտրէ եւ մեզի տեղեկացնէ թէ ե՞րբ
կը փափարի ունենալ՝ որպէս զի գրկենք իրեն, մէկ շաբթուան պայմանա-
ժամով, եւ վիտիօ թէյֆը գաւրաստելէ ետք վերագործնէ մեզի:

Յուսով ենք որ շուտով կը լսենք ձեզմէ այս մասին:

Սիրոյ ողջունիւ

ՅԱՐԳՅԱՆ ԱՐՇԱԿՍԿՈՂՅԱՆ
Առաջնորդ

Յունիս 6, 1977

Մեծայարգ
Տիար Յովհաննէս Հեքիմեան
Ս. Գէորգ Հայց. Եկեղեցի
Հիւսթըն.

Յարգելի Տիար Հեքիմեան,

Բարի եղէք առաջին առիթով Ս. Գէորգ Եկեղեցւոյ շնորհաբեր Երեմիայի Մարտիրոսի Գիւանի անդամներուն յասցէները եւ հեռաձայնի թիւերը դրկել Առաջնորդարան՝ զանոնք գտնելու համար հրատարակուելիք յասցէներու գրքոյկին մէջ:

Պանխայտ շնորհակալութեամբ եւ յարգանքով՝

Նուպար Քիւփէլեան
Քարտուղար

Քիւ 25575

Յունուար 31, 1978

Արժանաշնորհ
Տ. Դերենիկ ԶՆՅ. Գոնճրալեան
Հովիւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ
Նախագահ Ժխական Խորհուրդի
Հիւսթըն.

Սիրելի Տէր Դերենիկ,

Ասացած ենք Յունուար 17, 1978 թուակիր ձեր նամակը եւ ներփակեալ
ցանկը համայնքիդ տրառու անդամներուն:

Ձեր նամակէն հաճոյքով տեղեկացանք ~~նախկին~~ արդարադիւնաւոր գործու-
նէութեան մասին: Ուրախ ենք որ ձեզի վստահուած պաշտօնը նուիրումով
ու հետեւողականութեամբ կը կատարէք, եւ ձեռք բերուած արդիւնքները
արդարօրէն կը խանդավառեն ձեզ ու Ժխական Խորհուրդդ:

Կը մաղթենք որ անդամական առաջին ժողովը յաջողութեամբ զուամարուի:
Կը սպասենք ժողովի արդիւնքին եւ անոր ամբողջական տեղեկատուութեան:

Քող Տիրոջ օրհնութիւնը զօրացնէ ձեզ եւ ձեր գործակիցները ձեր հա-
ւաքին մէջ եւ առաջնորդ հանդիսանայ եկեղեցանուէր ու ազգանուէր ձեր
բարի գործերուն:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐԵՅԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Քիւ 25649
Մարտ 8, 1978

Արժանաշնորհ
Տ. Դերենիկ ԼԳՆԿ. Գոնարալեան
Հովիւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Հիւսիսըն.

Սիրելի Տէր Դերենիկ,

Ստացած ենք Փետրուար 27, 1978 թուակիր ձեր առեկազիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 5ին գումարուած համայնքիդ առաջին Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի ինն անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Սյուսէ կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Ստաշնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ ներփակեալ առեկազիրները:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունելի

ՔՈՐԳՈՄ ԱՐԸԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Երկու տարի
Յովհաննէս Հէրիմեան
Ասեփան Սէրգէնեան
Նարայեա Բերամեան
Ճէյմս Գոյանեան
Փիթըր Գասրալեան

Մէկ տարի
Սուրէն Երիզարեան
Ճանի Օհանեան
Յովիկ ֆրանքեան
Զաւէն Տիրբշարեան

Քիւ 26815
Մարտ 27, 1979

Արժանաշնորհ
Տ. Դերենիկ ՔՆՆյ. Գոնարալեան
Հովիւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Հիւսիսըն.

Սիրելի Տէր Դերենիկ,

Սաացած ենք Մարտ 12, 1979 թուակիր ձեր սեղեկագիրը, որով կը հաղորդէք
թէ ձեր նախագահութեամբ Յունուար 28ին գումարուած համայնքիդ Ժիական Ժողո-
վին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի շորս անդամոց ընտրութիւնը, եւ ներ-
կայացնելով բուժարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւե-
րացման պաշտօնագիրը:

Այսու զիրով կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի նորընտիր անդամները,
ըստ ստորեւ արուած ցանկին:

Համեցօք փութով Առաջնորդարան ղրկել Ժիական Խորհուրդի նորընտիր Դիւանի
անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ ներփակ-
եալ սեղեկագիրը՝ ձեր եւ Ժիական Խորհուրդի Ասենազեան ու Ասենգոզիին կող-
մէ ստորագրուելէ ետք:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօ-
նակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան արի մը, ի պայծառութիւն
Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ Ժողովուր-
դին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿԱԳՈՍ
Առաջնորդ

Զաւէն Էրրըշարեան
Ճէնի Օհանեան
Փօլ Գարամանեան
Յասմիկ Մավուլեան

Քիւ 26815
Մարտ 27, 1979

Արժանաշնորհ
Տ. Գերենիկ Քհնյ. Գոնարալեան
Հովիւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Հիւսթըն.

Սիրելի Տէր Գերենիկ,

Ստացած ենք Մարտ 12, 1979 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Յունուար 28ին զուարուած համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի շորս անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցօք փութով Առաջնորդարան ղրկել ժիական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը, ինչպէս նաեւ ներփակեալ տեղեկագիրը՝ ձեր եւ ժիական Խորհուրդի Ատենապետին ու Ատենադպիրին կողմէ ստորագրուելէ ետք:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան արի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԱՐԷԵԳԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

Զաւէն Զրրըշարեան
Ճէնի Օհանեան
Փօլ Գարամանեան
Յասմիկ Մալուլեան

Քիւ 26847
Ապրիլ 19, 1979

Արժանաշնորհ
Տ. Դերենիկ ԲԻՆՅ. Գոնարալեան
Հովիւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ
Հիւսթըն.

Սիրելի Տէր Դերենիկ,

Տարեկան թեմական Գառգամաւորական ժողովէն ետք, Մայիս 9-11ին
պիտի գտնուինք Սան Անթոնիո Թէքսաս եւ պիտի մասնակցինք Նէյշը-
նըլ Գառնսըլ Ավ Զըրչըզի համագումարին:

Այս առթիւ պիտի փափարինք գիտնակ թէ այդ օրերուն դուք Հիւս-
թըն պիտի գտնուի՞ք եւ կրնա՞ք մեզի հետ մասնակցիլ յիշեալ համա-
գումարին: Հաճեցէք անմիջապէս մեզի տեղեկացնել ձեր պատասխանը՝
որպէս զի ձեր անունը հաղորդենք համագումարի կազմակերպիչ յանձ-
նախումբին:

Գիտի ուզէինք նաեւ ունենալ Սան Անթոնիո բնակող հայերուն ա-
նուններն ու հասցէները: Եթէ այնտեղ ծանօթ մը ունիք որ կրնայ
երեկոյ մը, Սան Անթոնիո մեր կեցութեան օրերուն, տեղւոյն բոլոր
հայերը համախմբել վայրի մը մէջ՝ որպէս զի բոլորին հետ հանդի-
պում մը ունենանք, ջանացէք անոր հետ յարմար կարգադրութիւն մը
ընել: Յարմար երեկոյ մը կրնայ ըլլալ Մայիս 8, Երեքշաբթի գիշեր,
եթէ ոչ՝ ԶԶԹեքշաբթի կամ Հինգշաբթի գիշեր:

Ձեզի կը ցանկանք բաջաողջութիւն եւ աստուածահաճոյ ձեր գոր-
ծերուն յաջողութիւն:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՂԻՍԿՈՂՈՍ
Առաջնորդ

3610 Honeysuckle
San Angelo, Texas 76901

Քիւ 26505
Սեպտեմբեր 12, 1979

Ազնուափայլ
Տիկին Թերեզա Փափազեան
Սան Անժէլօ.

Սիրելի Թերեզա,

Առաջած ենք Օգոստոս 20, 1979 թուակիր ձեր նամակը:

Ուրախ ենք որ յաջողած էք ձեր փեսան համոզել որ ձեր թոռնիկները
Հայց. Եկեղեցւոյ մէջ մկրտուին:

Մինչեւ 1980 Յունիս 20 մեր շաբաթավերջերը գրաւուած են: Յունիս
20ի յաջորդող շաբաթներուն համար Տէր եւ Տիկին Նազարոս Գօստսեանի
պատկանած ծուխի Հոգեւոր Հովիւին հետ ըրէք անհրաժեշտ կարգադրութիւն-
ները եւ մեզի տեղեկացուցէք: Եթէ որեւէ արգելք չունենանք ներկայ կը
գանուինք եւ կը մասնակցինք ձեր թոռնիկներու Մկրտութեան Խորհուրդին:

Հաճեցէք ստորեւ գտնել Նուարդ Եաղլեանի հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Չեզի եւ ձեր պարագաներուն կը ցանկանք բաջառողութիւն եւ երկար
կեանք: Ողջոյններ Քէնիին եւ իր ամուսնոյն: Եր յուսանք զիրենք եւս
տեսնելու պատեհութիւնը ունենալ յաջորդ տարիէն առաջ:

Սիրոյ ողջունիւ

ՔՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԱՌՊՈՍ
Առաջնորդ

Miss Nevart Yaghlian
100 Fairview Square, #7D
Ithaca, New York 14850
Tel: 607-256-4549

Քիւ 26775
Մարտ 21, 1980

Արժանաշնորհ
Տ. Դերենիկ ԲՆՅ. Գոնտրալեան
Հովիւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ
Նախագահ Ժիական Խորհուրդի
Հիւսթըն.

Սիրելի Տէր Դերենիկ,

Ստացած ենք Մարտ 7, 1980 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 10ին գումարուած համայնքիդ ժիական ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ժիական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ժիական Խորհուրդի նորընտիր ղիւս-նի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ աղղիւնաւոր զործունէութեան սարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈԳՈՍ
Առաջնորդ

Ծոհանէս Հէքիմեան
Ճէյմս Գոյաճեան
Փիթըր Պասրալեան
Գէորգ Հէքիմեան
Վարդգէս Թախթաճեան
Ստեփան Սարգէնեան՝ մէկ տարուան համար